Ինտերնետային գնումները ՎՏԲ-Հայաստան Բանկի բոլոր քարտապանների համար ավելի անվտանգ են

3D Secure/Secure code ծառայության շնորհիվ Ձեր քարտով ինտերնետային վճարումները դարձել են էլ ավելի անվտանգ!

Ինչպե՞ս է աշխատում 3D Secure /Secure code ծառայությունը

1. 3D Secure/Secure code ծառայությունն ավտոմատ ակտիվացված է Բանկի բոլոր քարտապանների համար, ովքեր Բանկում ունեն գրանցած բջջային հեռախոսահամար:

2. Բանկի նոր քարտապանների համար 3D Secure/Secure code ծառայությունն ավտոմատ կակտիվանա քարտի բացման պահին:

3. Ինտերնետ միջավայրում VBV/Secure code նշում ունեցող կայքերում վճարում իրականացնելիս գործարքի հաստատման պահին քատապանի բջջային հեռախոսահամարին ուղարկվում է SMS հաղորդագրություն մեկանգամյա գաղտնաբառով: Նշված ծառայությունը թույլ է տալիս նույնականացնել քարտապանին վճարման պահին՝ բացառելով երրորդ անձանց կողմից քարտի չլիազորված օգտագործման ռիսկը:

4. Ինտերնետ միջավայրում 3D Secure/Secure code համակարգը չապահովող կայքերում վճարումներ իրականացնելիս, վճարումը կկատարվի առանց մեկանգամյա գաղտնաբառի մուտքագրման:

3D Secure/Secure code ծառայության առավելություններ՝

• Անվտանգություն՝ Ձեր քարտը պաշտպանված է մեկանգամյա գաղտնաբառով, որը հասանելի է միայն Ձեզ և գործում է ընդամենը մեկ վճարման համար:

• Հարմարավետություն՝ կարիք չկա հիշել գաղտնաբառը, քանի որ այն մեկանգամյա է և ուղարկվում է քարտապանին ամեն անգամ 3D Secure/Secure code ծառայությունն ապահովող ինտերնետ կայքում վճարում իրականացնելիս:

Բանկն իրավունք ունի մերժել ինտերնետ միջավայրում Ձեր քարտով իրականացվող վճարումը, եթե Դուք չեք տրամադրել Բանկին Ձեր բջջային հեռախոսահամարը կամ առանց Բանկին ծանուցման փոխել եք Ձեր բջջային հեռախոսահամարը, որի արդյունքում.

• Ձեր բջջային հեռախոսահամարին չի ուղարկվի VBV/Secure code նշում ունեցող կայքերում վճարման իրականացման համար անհրաժեշտ մեկանգամյա գաղտնաբառը,

• VBV/Secure code նշում չունեցող կայքերում չի բացառվում երրորդ անձանց կողմից Ձեր քարտի չլիազորված օգտագործման ռիսկը:

Օնլայն խանութների կայքերում, որոնք ապահովում են 3D Secure/Secure code ծառայությունը, առկա է հետևյալ լոգոտիպը՝

Verified by VISA MasterCard SecureCode